



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

01.07.2014թ.-01.07.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված
աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ



ԶՈՎՈՒՆԻ 2015թ.

➤ **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2013թ. դեկտեմբերի 20-ին համայնքի ավագանին իր N 64-Ն որոշմամբ ընդունել է 2014թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 103 մլն 995 հազար 6 հարյուր դրամ, ծախսերը՝ 131 մլն 835 հազար 3 հարյուր դրամ: Պակասորդը կազմել է 27 մլն 839 հազար 7 հարյուր դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Ջովունի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 5 մլն 109 հազար դրամ: 2014 թ հողի հարկը հավաքագրվել է 5 մլն 129 հազար 6 հարյուր 70 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100.4 %-ը:

2014թ. գույքային հարկերը հավաքագրվել է 101.9%-ով՝ 21 մլն 987 հազար 4 հարյուր դրամ 21 մլն 580 հազար դրամի փոխարեն:

2014թ. դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր N 57-Ն որոշմամբ ընդունել է 2015թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 117 մլն 7 հազար դրամ, ծախսերը 152 մլն 55 հազար 5 հարյուր դրամ: Պակասորդը 34 մլն 48 հազար 5 հարյուր դրամ, որը լրացվել է նախորդ տարվա մնացորդի հաշվին: Հողի հարկը կազմել է 5 մլն 169 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 2 մլն 12 հազար 1 հարյուր դրամ, որը կազմում է տարեկան պլանի 38.9%-ը: Գույքային հարկերը կազմել են 21 մլն 880 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 5 մլն 227 հազար 4 հարյուր դրամ, որը կազմում է տարեկան պլանի 20.7%-ը:

Տեղական տուրքերի գծով առաջին կիսամյակում 1մլն 500 հազար դրամի փոխարեն կատարվել է 455 հազար դրամ որը կազմում է 30.3%-ը:

➤ **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 6055.0 հազար դրամի օգնություն, որից 3080.0 հազարը 2014թ երկրորդ կիսամյակում, իսկ 2975.0 հազար դրամը 2015թ. առաջին կիսամյակում:

➤ **ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքում գործող միջնակարգ դպրոցը, համայնքային ենթակայության երաժշտական դպրոցը, մանկապարտեզը և մշակութային կենտրոնը մշտապես գտնվում են համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի մանկապարտեզից դպրոց հաճախող բոլոր երեխաներին տրամադրվել է պայուսակներ և գրենական պարագաներ, դպրոցի

ավարտական դասարաններին վերջին դասի միջոցառման ինչպես նաև ուսուցչի օրվա կապակցությամբ տրամադրվել է դրամական օգնություններ: Մանկապարտեզի վերանորոգումից հետո ձեռք է բերվել որոշակի քանակությամբ անհրաժեշտ կահավորանք և ամբողջովին հիմնանորոգվել է չվերանորոգված լվացքատան հատվածը: Մանկապարտեզի, մշակույթի տան նաև համայնքի տարածքի խաչմերուկների՝ ավտոբուսների կանգառներում տեղադրվել են հանգստի սպասասրահ-տաղավարներ: Կատարվել է մշակույթի տան և արվեստի դպրոցի վերանորոգման նոր եվրոպատուհանների տեղադրման նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ 600.0 հազար դրամի չափով: Կատարվել է 360.0 հազար դրամի ներդրում <<Բազե-2015>> համահայկական խաղերի մասնակցության համար, որի ընթացքում այս տարի ևս մեր պատանիները ունեն մրցանակային տեղեր:

➤ **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և գյուղապետարանի կողմից կատարվել և արձանագրվել է համայնքի տարածքում առկա հնագիտական հուշարձան-դամբարանադաշտերը: Համայնքի միջոցներով Զովունիի երկրորդ հատվածում կատարվել է 650.0 հազար դրամի շին վերանորոգման աշխատանքներ՝ վերականգնվել է <<Թուխ-մանուկ>> եկեղեցի մատուռի տանիքի ծածկը ամբողջությամբ:

Համայնքում աղբահանությունը և փողոցների մաքրումը ամբողջությամբ կատարվում է համայնքի միջոցներով, որի համար յուրաքանչյուր կիսամյակ կատարվում է 1 մլն 900 հազար դրամի ֆինանսավորում: Համայնքում հրատապ խնդիր է միայն աղբավայրի հարցը, որը կարծում ենք կլուծվի առաջիակայում համայնքի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքներից հետո:

➤ **ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքի տարածքում գործում են թվով 21 հատ առևտրի խանութ-տաղավարներ, 2 հատ հանրային սննդի օբյեկտներ, 4 հատ կենցաղային սպասարկաման օբյեկտներ և 3 հատ գազալցակայաններ, որոց նկատմամբ կատարվում է համապատասխան հսկողություն, տեղական տուրքերի վճարման դեպքում տրվում է համապատասխան թույլատվություն ծխախոտի, ոգելից խմիչքների և գազի վաճառքի համար:

➤ **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2014թ. երկրորդ կիսամյակում համայնքի գլխավոր հատակագծի կազմման համար հայտարարված մրցույթի արդյունքում գյուղապետարանը կնքել է համապատասխան պայմանագիր հաղթող կազմակերպության հետ 5.0 մլն դրամի չափով, որի աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Համայնքում տեղի ունեցած տարերային աղետից տուժած բազմաբնակարան 6 հարկանի շենքի տանիքի վթարի վերանորոգման համար մարզպետարանի կողմից տրամադրված 5.0 մլն դրամի և համայնքի միջոցներից տրամադրված 5.0 մլն դրամի համաֆինանսավորմամբ սահմանված կարգով մրցույթում շահող <<Նաիրի Շին>> ԲԲԸ կազմակերպության կողմից սեպտեմբեր ամսին կատարվել է նշված շինության տանիքի կառուցապատում:

Համայնքում կատարվել է նաև ասֆալտապատ փողոցների փոսային նորոգումների աշխատանքներ 993.7 հազար դրամի, ասֆալտապատման աշխատանքներ 901.2 հազար դրամի: Ընթացքի մեջ են 2015թ. կոյուղագծերի վերանորոգման ասֆալտապատման և վերանորոգման աշխատանքները, որոնց համար պատվիրված են համապատասխան նախագծային փաստաթղթերը:

➤ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ. հոկտեմբերի 9-ին կայացել է Զովունի համայնքի համայնքային սեփականություն համարվող հողերի աճուրդ վաճառք, որի արդյուքում օտարվել է թվով 6 միավոր հողատարձքներ, որից 1-ը գյուղատնտեսական նշանակության 0.17 հա և թվով 5 միավոր բնակավայրային նշանակության հողատարձքներ: Աճուրդի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել համապատասխանաբար 26.8 հազար և 10599.0 հազար դրամ:

2015թ. մարտի 3-ին և ապրիլի 20-ին կայացած համայնքային սեփականություն համարվող հողերի աճուրդ վաճառքի արդյուքում օտարվել է թվով 5 միավոր հողատարձքներ, որոցից 1-ը բնակավայրերի արդյունաբերական նշանակության հողատեսք 0.015 հա, 1-ը գյուղատնտեսական նշանակության հողատեսք, 0.17 հա և թվով 3-ը բնակավայրային նշանակության հողատեսքեր: Աճուրդի արդյունքում բյուջե է մուտքագրվել համապատասխանաբար 704.5 հազար դրամ, 237.0 դրամ և 8639.6 հազար դրամ:

Կատարվել է նաև գյուղ նշանակության 1 միավոր հողատեսքի մրցույթ, 0.475 հա մակերեսով 25 տարի ժամկետով, որի համար սահմանվել է տարեկան 17.220 հազար դրամ տարեկան վարձավճար: